ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2019/52

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.02.2019թ. թիվ 26/26/3217-19 գրությամբ «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 21.02.2019թ. թիվ 08/15.3/2040-19 գրության հիման վրա, 28.02.2019թ. թիվ 26/26/3217-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Համաշիննախագիծ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Համաշիննախագիծ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 05.03.2019թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

«Համաշիննախագիծ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 04.03.2019թ. տրված թիվ 275 տեղեկանքը:

3. **<u>ՀՀ տրանսպորտի, կապ և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից ներկայացված փաստերը.</u>**

ՀՀ տրանսպորտի, կապ և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 21.02.2019թ. թիվ 08/15.3/2040-19 գրությամբ հայտնել է, որ ՀՀ տրանսպորտի, կապ և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների իրականացման նպատակով հայտարարվել է թիվ ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/1Ն ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ն և մի քանի չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղը զբաղեցնող մասնակից:

Գնահատող հանձնաժողովի կողմից 13.02.2019թ. հարցում է ներկայացվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար՝ նշելով մասնակիցների հայտը ներկայացնելու օրը:

Ի պատասխան վերոնշյալ հարցման՝ «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 112 878 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված թույլատրելի շեմը:

Ամփոփելով վերոգրայլը, Պատվիրատուն հայտնել է, որ ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջներով, կից ներկայացնում է անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան ընթացք տալու համար:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 05.03.2019թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ՍՑ-ԱՄ-2019/52 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2019/52 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ տրանսպորտի, կապ և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների իրականացման նպատակով հայտարարվել է ոիվ ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/1Ն ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***01.02.2019թ.*** հայտ է ներկայացրել «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.02.2019թ. ժամը 15:30-ի նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետով կայացված որոշմամբ «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ն ընթացակարգի 12րդ և 17-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 18.02.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝

«Համաշիննախագիծ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 112 878 ՀՀ դրամի չափով:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 19.02.2019թ. ժամը15:30-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի թիվ 12-րդ և 17-րդ չափաբաժինների մասով մերժել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Մհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.02.2019թ. թիվ 26/26/3217-19 գրությունը, ՀՀ տրանսպորտի, կապ և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 21.02.2019թ. թիվ 08/15.3/2040-19 և կից փաստաթղթերը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 04.03.2019թ. տրված թիվ 275 տեղեկանքը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու*** և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին ***հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող*** կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ***ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար

սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին

հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Այսպիսով, ՀՀ տրանսպորտի, կապ և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների իրականացման նպատակով հայտարարվել է ոիվ ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/1Ն ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***01.02.2019թ.*** հայտ է ներկայացրել «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.02.2019թ. ժամը 15:30-ի նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետով կայացված որոշմամբ «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ն ընթցակարգի 12-րդ և 17-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 18.02.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Համաշիննախագիծ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 112 878 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 19.02.2019թ. ժամը15:30-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի թիվ 12-րդ և 17-րդ չափաբաժինների մասով մերժել է:

Այսպիսով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 18.02.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 01.02.2019թ., ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 112 878 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը:

Միևնույն ժամանակ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 04.03.2019թ. տրված թիվ 275 տեղեկանքը, համաձայն որի «***Համաշիննախագիծ» ՍՊԸ-ն 01.02.2019թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:***

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով, հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 04.03.2019թ. տրված թիվ 275 տեղեկանքը, համաձայն որի «***Համաշիննախագիծ» ՍՊԸ-ն 01.02.2019թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություններ***

չունի, գտնում եմ, որ «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.02.2019թ. թիվ 26/26/3217-19 գրությամբ «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**